ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1952 Общественные науки

ՌՈՒՍ ՄԵԾ ԳՐՈՂ ԳՈԳՈԼԸ

Լրացավ ռուս մեծ գրող Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլի մահվան հարյուր տարին։ Ինչպես Պուշկինը ռուս պոեզիայի, այնպես էլ Գոգոլը ռուս արձակի հայրն է, 19-րդ դարի համաշխարհային գրականության մեջ ամենաառաջնակարգ տեղ բռնող ռուս վիթխարի գրականության առաջատար ժանրի՝ գեղարվեստական արձակ գրականության հիմնադիրը։ Չերնիշևսկին 1855 թվականին գրում էր, որ «Գոգոլյան ուղղությունը մինչ այժմ մնում է մեր գրականության միակ ուժեղ ու բեղմնավոր ուղղությունը. մեր գրականության մեջ մինչ այժմ շարունակվում է գոգոլյան պերիոդը... և մենք չգիտենք, շուտով արդյոք հնարավորություն կունենանք ասել «ռուս գրականության համար սկսվեց նոր ժամանակաշրջան»։ Անկասկած, Չերնիշևսկին միանգամայն իրավացի էր։ Համաշխարհային առումով առաջինը ռուս գրականության մեջ էր, որ քննադատական ռեալիզմը հանձինս Պուշկինի, Գրիբոեդովի, Լերմոնտովի և, մանավանդ, Գոգոլի ստեղծագործությունների հասարակականորեն ճանաչված տիրապետող գրական ուղղությունը դարձավ, տալով Օստրովսկու, Սալտիկով-Շչեդրինի, Տոլստոյի և Չեխովի նման վիթխարի մեծություններ։ Իրոք, գոգոլյան քննադատական ռեալիզմի պերիոդը շարունակվեց՝ մինչև որ ռուս գրականության մեջ մեծ Գորկին սկզբնավորեց մի նոր ժամանակաշրջան, սոցիալիստական ռեալիզմի ժամանակաշրջանը, սոցիալիստական ռեալիզմի, որը պահպանելով իր մեջ՝ զարգացրեց և հարստացրեց Գոգոլի ստեղծագործության լավագույն տրադիցիաները։

Ձուլելով նախորդ՝ ոչ ռուսական և ոչ էլ օտար գրականությունների մեջ, բովանդակության և ձևի ինքնատիպությամբ արտակարգ իր այնպիսի փայլուն ստեղծագործություններով, ինչպիսիք են՝ «Երեկոներ Դիկանկայի մոտ՝ խուտորում», «Վաղեմի կալվածատերերը», «Տարաս Բուլբա», «Քիթ», «Պորտրետ», «Շինել», «Ռևիզոր», «Ամուսնություն», «Մեռած հոգիներ» և այլն, Գոգոլը մեծ ավանդ մտցրեց ամբողջ մարդկության գեղարվեստական կուլտուրայի մեջ և առաջ տարավ այն։ Գոգոլի ստեղծագործության մեջ իր ամենախորունկ և լայն արտացոլումը գտավ ժամանակի ռուս կյանքը իր ամբողջ նրբերանգներով՝ սոցիալական պայքարի ուժգին զարգացման պրոցեսի մեջ։

«Մեռած հոգիներ» վեպի առաջին հատորի վերջում՝ իր սքանչելի լիրիկական շեղմամբ օգտագործելով սլացող թռչուն-տրոյկայի պատկերը, հեղինակը բացագանչում է. «Արդյոք այդպես, չես նաև դու, Ռուսիա, որ իբրև ժիր, առաջը չկարվող տրոյկա՝ սլանում ես։ Ծխով ծխում է քո տակ ճանապարհը, որոտում են կամուրջները, ամեն ինչ ետ է մնում և մնում ետևում... կայծակ չէ՞ արդյոք սա երկնքից նետված... Էխ նժույգնե՞ր, նժույգներ, ի՞նչ նժույգներ են։ Մրրիկնե՞ր են արդյոք նստած ձեր բաշերում... Ռուսիա, ուր ես սլանում, տուր պատասխան։ Չի տալիս պատաս-

խանդ։ Գոգոլի համաշխարհային նշանակությունը, նրա ստեղծագործության գեղարվեստական մեծությունը պայմանավորող կողմերից է հատկապես այն, որ չնայած նա չստացավ պատասխան, թե դեպի ուր է գնում Ռուսաստանը, բայց հանճարեղ մարդու խորաթափանց հայացքով տեսավ իր հայրենիքի, ռուս մեծ ժողովրդի ներսում կուտակված տիտանական ուժերը, նրա ազգային բնավորության նշանավոր գծերը, որոնք նրան մղում էին դեպի առաջ, դեպի հոյակապ ապագան։

Ջերմ հայրենասիրությունը, ժողովրդական հումանիզմը և դեպի ժողովրդի ուժերը ունեցած հավատքը՝ Տարաս Բուլբայի բոգատիրական անմահ կերպարը կերտողին՝ Գոգոլին, մղեցին Նիկոլայևյան ռեակցիայի և կալվածատիրական ու ճորտատիրական հետադիմական կարգերի համարձակ սատիրական քննադատությանը, ճորտատերերի ու ցարական բյուրոկրատիայի ամեն տեսակ խժդժություններին անողոք մերկացմանը։ Երբ լույս տեսավ «Մեռած հոգիների» 1-ին հատորը, այդ առթիվ հանճարեղ Բելինսկին գրեց. «որպես կայծակի թարմացուցիչ փայլատակումը տանջալի և նեխացնող հեղձկության ու երաշտի պահին, երևան է գալիս զուտ ռուսական, ազգային, ժողովրդական կյանքի գաղտնարանից դուրս պոկված մի երկ, որն այնքան ճշմարիտ է, որքան և հայրենասիրական, որն անողոքաբար պոկում է իրականության քողը և կրքոտ ներվային արենակցական սիրո շունչ ունի՝ ռուսական կյանքի բեղմնավոր հատիկի նկատմամբ, մի երկ, որ անսահման գեղարվեստական է իր կոնցեպցիայով և կատարմամբ, գործող անձանց բնավորություններով և ռուսական կենցաղի մանրամասնություններով և միևնույն ժամանակ խորը իր մտքերով...»։

Գոգոլը, որը տարիների ընթացքում չտեսնված խստապահանջությամբ հղկում էր իր երկերը, առանձնապես ցնցող-գեղարվեստական արդյունքների հասավ գործող անձանց բնավորություններ, մարդկային տիպեր կերտելու բնագավառում։ Նրա գործերի բազմաթիվ հերոսների անունները դարձան հասարակ անուններ և կենդանի կերպով մեացին ընթերցող մասսաների հիշողության մեջ։ Կարելի է թվել նման տիպերի մի երկար շարք, ինչպես, օրինակ՝ Իվան Իվանովիչ և Իվան Նիկիֆորովիչ, Ակակի Ակակիևիչ, Լյապկին-Տյապկին, Դորչինսկի և Բորչինսկի, Գերժիմորդա, Խլեստակով, Մանիլով, Սոբակևիչ, Նոզդրյով, Պլյուշկին, Պարզապես հաճելի տիկինը, Ամեն կողմերով հաճելի տիկինը, Կարոբոչկան և այլն և այլն։ Առանց այլևայլության պետք է նշել, որ Գոգոլը համաշխարհային գրականության մեջ նմանը չունի կերտած տիպի սոցիալական ընդհանրացնող հոյակապ ամբողջություն ստեղծելու իմաստով, նկարագրությունների ամենափոքրիկ մանրամասներն անգամ՝ այդ ամբողջության հասնելու համար օգտագործելու իմաստով։

Իր հանճարեղ ստեղծագործություններով, իր ստեղծած սոցիալական տիպերով Գոգոլը ահագին ներգործություն ունեցավ ռուս հասարակական կյանքի վրա՝ հզորապես նպաստելով ցարիզմի և ճորտատիրական դաժան կարգերի դեմ ժողովրդի մղած՝ համաշխարհային նշանակություն ունեցող պայքարին և առհասարակ ժողովրդի ինքնագիտակցության զարգացմանը։ Ահա թե ինչու այնքան բարձր էին գնահատում Գոգոլին ռուս հեղափոխական դեմոկրատները։ Ահա թե ինչու նախամարքսյան էսթետիկայի ողջ

պատմության մեջ միայն նրանք մշակեցին քննադատական ռեալիզմի տեսությունը։

Թե որքան մեծ է Գոգոլի ստեղծագործության և կերտած տիպերի հայուն գեղարվեստական արժեքը, կենսական ճշմարտությունը, աննախընթաց սատիրական մերկացնող ուժը, դա սքանչելի կերպով բացահայտված է Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի աշխատությունների մեջ։ Լենինը և Ստալինը խոշոր ռեալիստ շատ գրողների թվում՝ հաճախ նաև Գոգոլի կերպարներն են հիշատակել իրենց երկերում, նրանցով արտահայտված սուր երգիծանքի ուժը օգտագործելով ժողովրդին թշնամի ուժերին մերկացնելու և ջախջախելու գործում։ Գոգոլի ստեղծագործությունը ստացել է շատ բարձր գնահատական Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից։ Քառասուն տարի առաջ Լենինը գրել է Բելինսկու և Գոգոլի դեմոկրատական իդեաների տարածման կարևորության մասին։ Ընկեր Ստալինը Գոգոլին անվանել է ռուս մեծ գրող։

Գոգոլի անունը վաղուց հռչակված է համաշխարհային գրականության մեջ։ Նրա ազդեցությունը մեծ է արտասահմանյան բազմաթիվ գրողների վրա։

Մեծ է Գոգոլի ստեղծագործության նշանակությունը նաև հայ գրականության զարգացման պատմության մեջ։ Նրանից սովորել և ներշնչվել են հայ արձակագիրներից և դրամատուրգներից շատերը՝ սկսած մեր նոր գրականության հիմնադիր Աբովյանից մինչև ժամանակակից սովետահայ արձակի նշանավոր դեմքերից մեկը՝ Դերենիկ Դեմիրճյանը։ Անկախ այն հանգամանքից, որևիցե տեղ Աբովյանը հիշատակել է Գոգոլի անունը, թե ոչ, նրա ստեղծագործությունից երևում է, որ նա ծանոթ է եղել Գոգոլի գործերին և օգտագործել է նրա ստեղծագործական մեծ կուլտուրան։ Աբովյանի ռիթմիկ արձակը, նրա լիրիկական հագեցվածությունն ու շեղումները, իրականության հարուստ ռեալիստական պատկերները, հետամնացության և պահպանողական խավերի դեմ ուղղված սատիրան այդ են ապացուցում։ Իսկ արդեն 50—60-ական թվականներին հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանը, հետևելով ռուս ռևոլյուցիոն դեմոկրատական քննադատությանը և նույնպես աչքի առաջ ունենալով Գոգոլի ստեղծագործությունը՝ մշակեց քննադատական ռեալիզմի տեսությունը և զարգացրեց ու խրախուսեց հայ գրականության մեջ քննադատական ռեալիզմը։ Նալբանդյանը ամբողջ ուժով ծառացավ պահպանողականության արծարծած գրական ռեակցիոն հայացքների դեմ, որոնք հանգում էին այն բանին, որ գրողից պահանջվում էր, թե—

Զխոովելով մեր խիղճը,
Զաղմկելով մեր հոգին
Տուր մեզ տաղեր, վեպ, առակ,
Հաճոյացիր մեր սրտին.
Թող դատարկ բաներ լինեն
Մարդու վերք տալ չունենան,
Թեթև ու ծիծաղաշարժ,
Փորերս փույթ չէ թող շարժ դան...

Այլ խոսքով՝ այստեղ Նալբանդյանը, ինչպես Բելինսկին, ամենայն վճռականությամբ և կրքով ծառանում է այն մարդկանց դեմ, որոնք ցավ էին զգում ու գանգատվում նրա համար, որ գրականությունը դադարում է իրականության մասին անամոթաբար ստելուց և նրա մեջ հանդես է գալիս քննադատական-ռեալիստական հոսանքը։ Նալբանդյանից հետո հայ առաջավոր գրողներ՝ Սունդուկյանը, Թումանյանը, Պռոշյանը և ուրիշները, ինչպես և սովետահայ արձակագիրները և դրամատուրգները, միշտ մեծագույն հիացմունքով են արտասանել Գոգոլի անունը և շատ բան են սովորել նրանից։

Ռուս գեղարվեստական խոսքի հանճարեղ վարպետ Գոգոլը անմահ է։ Նրա ստեղծագործությունները, որոնք հագեցված են ժողովրդայնությամբ, կենսասիրությամբ, հայրենասիրությամբ, ժողովրդական իմաստությամբ՝ հավերժ կապրեն աշխարհիս բոլոր ժողովուրդների մեջ։ Գոգոլյան սատիրան այսօր ուժեղ զենք է խաղաղասեր ժողովուրդների ձեռքում՝ աշխատավորության ու խաղաղության թշնամիների՝ իմպերիալիստական ամեն տեսակի խլեստակովների, նոզդրյովների և սորակևիչների դեմ պայքարելու գործում։

Մի դար է անցել Գոգոլի մահվան օրից, բայց ահա նրա գրական հեղինակությունը և հմայքը այսօր ավելի բարձր է ու մեծ, քան երբևիցե։ Խաղաղության համար ծավալվող շարժման գլուխ կանգնած սովետական ժողովուրդների հետ աշխարհիս բոլոր երկրների պրոգրեսիվ հասարակայնությունը հարգում են Գոգոլի անմահ հիշատակը։

Հավերժ փառք ռուս ազգային հանճար Գոգոլին։